ԵՊՀ ԻՄ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի 2017-2018 ուստարվա գործունեության
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

30.06.2018թ.

ԵՊՀ ԻՄ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ԵՊՀ ԻՄ 2016-20 ռազմավարական պլանավորման շրջանակներում իրականացրել է կազմակերպչական, շրջանավարտներին և գործատուներին աջակցելու նպատակային կոնկրետ գործունեություն:

1. Դեռևս 2014թ.-ից գործադրված է մասնաճյուղի շրջանավարտների տվյալների բազա, որում գրանցված են 2010-2017թթ. շրջանավարտների տվյալները (2828 շրջանավարտի տվյալներ, այդ թվում՝ 1400 առկա ուսուցման համակարգից, 1428-ը՝ հեռակա ուսուսման համակարգից), 2018թ. շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվությունը բազային կավելացվի հաջորդ ուստարվա սկզբին:

Այդ տվյալները մշտապես թարմացվում են: ՈՒ քանի որ բազան բավականին տեղեկատվություն է ներառում շրջանավարտների և նրանց ընթացիկ զբաղվածության վերաբերյալ, հաջողությամբ ծառայում է և՛ գործատուների, և՛ շրջանավարտների հետ ակտիվ համագործակցությանը:

2017թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին բաժնի մասնագետ, շրջանավարտների ու կարիերայի աշխատանքները համակարգող Ա.Եգանյանն իրականացրել է հարցում՝ վերջին 5 տարիների շրջանավարտների զբաղվածությունը վերլուծելու նպատակով: Այդ վերուծության արդյունքները տրամադրվել են կրթական ծրագրերի ղեկավարներին՝ ծրագրերի առաջարկի հայտերում նոր ծրագրի հիմնավորման համար:

	2016		2017	
	Քան.	%	Քան.	%
Ընդամենը ուսանող	**185**		**165**	
Աշխատում են, որից՝	**67**	**36.2%**	**37**	**22.4%**
Մասնագիտությամբ	**32**	**47.8%**	**16**	**43.2%**
Ոչ մասնագիտությամբ	35	**52.2%**	21	**56.8%**
Աշխատանքի են անցել 1-ին տարում	47	**70.1%**	29	**78.4%**
Աշխատանքի են անցել 2-րդ տարում	16	**23.9%**	0	**0%**
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում	31		18	

2. Կենտրոնը համագործակցում է մարզի մի շարք գործատու կազմակերպությունների հետ՝ նպաստելով շրջանավարտ-գործատու կապին: Այսպես՝ Կենտրոնի անմիջական աջակցությամբ ընթացիկ տարում աշխատանքի են անցել՝

- Արարատբանկ ԲԲԸ՝ Արամազդ Բաղիրյան, վարկային մասնագետ /Տնտեսագիտության տեսություն մասնագիտության շրջանավարտ/,
- Իմեքս Գրուպ /Իդեալ/՝ Արփինե Օթարյան, մենեջեր /Տնտեսագիտության տեսություն մասնագիտության շրջանավարտ/,
- Իմեքս Գրուպ /Իդեալ/՝ Արմեն Մանուչարյան, մենեջեր /Տնտեսագիտության տեսություն մասնագիտության շրջանավարտ, հեռակա ուսուցման համակարգ/,
- «Ենոքավան» զարգացման հիմնադրամ՝ Նարինե Չուխուրյան, Ծրագրերի օգնական /Սերվիս մասնագիտության շրջանավարտ/:

3. Կենտրոնն աջակցությամբ մասնաճյուղի կայքի միջոցով կազմակերպվել է տարբեր կազմակերպություններում թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարարությունների տարածումը /ՍՈՍ մանկական գյուղ, Բերդ՝ սոցիալական աշխատող, Ֆինքա ՈՒՎԿ՝

հաճախորդների խորհրդատու, ԱԻՆ՝ հոգեբան, «Ենոքավան» զարգացման հիմնադրամ՝ հաշվապահ, գանձապահ, Յուքոմ՝ վաճառող-խորհրդատու/:

4. 2017թ. դեկտեմբերի 16-ին կազմակերպվել է հանդիպում ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի գիտաշխատողների հետ, որոնք հանդես են եկել ակնարկային դասախոսություններով՝ քննարկելով բուհ-աշխատաշուկա կապի հնարավոր զարգացումները, անձի մասնագիտական գործունեության ընթացքում կարիերային նպաստող և խոչընդոտող հոգեբանական գործոնները, ուսանողների՝ որպես հետագա մասնագետների ինքնորոշման, մանկավարժական հմտություններ դրսևորելու, մասնավորապես՝ ուսանողների մեջ ստեղծագործական կարողություններ զարգացնելու խնդիրները:

5. ՈՒԳԸ համակարգող Սլավիկ Ալավերդյանի և Ուսանողական խորհրդի համատեղ նախաձեռնությամբ բարձր կուրսերի ուսանողների համար պարբերաբար անց են կացվել ապագա կարիերայի կազմակերպման վերաբերյալ տարբեր սեմինար-դասընթացներ:

6. 2018թ. մայիսին կազմկերպվել է հանդիպում Բագրատաշենի սահանապահ զորքերի ներկայացուցիչների հետ, տեղի է ունեցել քննարկում նրանց գործունեության վերաբերյալ և նրանց կողմից կատարվել է աշխատանքի առաջարկ մեր շրջանավարտ-ուսանողներին:

7. Կենտրոնը բանակցություններ է վարել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկի Իջևանի մասնաճյուղի հետ՝ ինտերնշիփային ծրագիր իրականացնելու նպատակով, որին մասնակցություն են ունեցել ավարտական կուրսի 12 ուսանողներ: Համագործակցությունը, սակայն միակողմանիորեն դադարեցվել է:

Կենտրոնն ունի իր ֆեյսբուքյան էջը, որին հետևում են շուրջ 300 օգտատեր:

ԵՊՀ ԻՄ կայքի «Շրջանավարտ» էջում պարբերաբար տեղադրվում են թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ՝ հիմնական միտում ունենալով մարզում գործազրկության նվազմանը նպաստելուն: Նույն էջում պարբերաբար թարմացվում և համալրվում են խորհրդատվական նյութերը, միաժամանակ մասնաճյուղում կենտրոնի համար նախատեսված ցուցատախտակում ներկայացվում են աշխատանք փնտրող շրջանավարտներին ուղղորդող նյութեր, ինչպես նաև պարբերաբար ներկայացվում են թափուր աշխատատղերի վերաբերյալ հայտարարություններ:

2018թ. մայիսին անց է կացվել շրջանավարտների՝ ԵՊՀԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության հարցում, որի արդյունքները ամփոփվել և վերլուծվել են ՄԿՈԱ բաժնում ըստ շրջանավարտների ուսման ձևի՝ առկա և հեռակա, ըստ ֆակուլտետների և կատարվել է նաև համեմատական վերլուծություն նախորդ 4 տարիների արդյունքների հետ: Հարցման արդյունքները և հաշվետվությունը տեղադրվել են կայքում և ուղարկվել են ֆակուլտետներ:

Կից ներկայացված են մասնաճյուղի 2013-2017թթ. շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ հավաքագրված տվյալները:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին

ԵՊՀ ԻՄ շրջանավարտների զբաղվածությունը վերջին 5 տարիների համար
(ըստ մասնագիտությունների, առկա ուսուցում)

1. Բնական գիտությունների ֆակուլտետ

Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա /2017/ Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա /2014-2016/	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը շրջանավարտ			-	13	21
Աշխատում են, որից՝		9	-	3	6
Մասնագիտությամբ		*3*	-	*1*	*2*
Ոչ մասնագիտությամբ		*6*	-	*2*	*4*
Աշխատանքի են անցել 1-ին տարում			-		
Աշխատանքի են անցել 2-րդ տարում			-		
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում		4	-	2	1

2. Տնտեսագիտության ֆակուլտետ

Տնտեսագիտության տեսություն	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը շրջանավարտ		32	-	35	21
Աշխատում են, որից՝		15	-	8	3
Մասնագիտությամբ		*13*	-	*7*	*3*
Ոչ մասնագիտությամբ		*2*	-	*1*	-
Աշխատանքի են անցել 1-ին տարում		11	-	5	3
Աշխատանքի են անցել 2-րդ տարում		4	-	2	-
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում		4	-	14	2

Սերվիս	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը շրջանավարտ		19	-	18	14
Աշխատում են, որից՝		12	-	7	5
Մասնագիտությամբ		4	-	2	-
Ոչ մասնագիտությամբ		8	-	5	5
Աշխատանքի են անցել 1-ին տարում		5	-	6	5
Աշխատանքի են անցել 2-րդ տարում		7	-	1	-
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում		2	-	1	3

3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

Հայոց լեզու և գրականություն	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը շրջանավարտ		19	-	24	18
Աշխատում են, որից՝		7	-	8	5
Մասնագիտությամբ		3	-	5	2
Ոչ մասնագիտությամբ		4	-	3	3
Աշխատանքի են անցել 1-ին տարում		4	-	7	5
Աշխատանքի են անցել 2-րդ տարում		3	-	1	0
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում		0	-	2	1

Պատմություն	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը շրջանավարտ			**-**	**23**	**18**
Աշխատում են, որից՝			**-**	**13**	**5**
Մասնագիտությամբ			-	*3*	*4*
Ոչ մասնագիտությամբ			-	*10*	*1*
Աշխատանքի են անցել 1-ին տարում			-	5	5
Աշխատանքի են անցել 2-րդ տարում			-	8	
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում			-	4	3

Մանկավարժություն և հոգեբանություն	**2013**	**2014**	**2015**	**2016**	**2017**
Ընդամենը շրջանավարտ		**21**	**-**	**8**	**19**
Աշխատում են, որից՝		**3**	**-**	**2**	**2**
Մասնագիտությամբ		*3*	-	*2*	*2*
Ոչ մասնագիտությամբ			-		
Աշխատանքի են անցել 1-ին տարում		2	-	2	2
Աշխատանքի են անցել 2-րդ տարում		1	-		
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում		1	-	1	1

Անգլերեն լեզու և գրականություն	**2013**	**2014**	**2015**	**2016**	**2017**
Ընդամենը շրջանավարտ	**22**	**28**	**-**	**24**	**29**
Աշխատում են, որից՝	**7**	**11**	**-**	**9**	**3**
Մասնագիտությամբ	*4*	*3*	-	*6*	*1*
Ոչ մասնագիտությամբ	*3*	*8*	-	*3*	*2*
Աշխատանքի են անցել 1-ին տարում	4	5	-	7	1
Աշխատանքի են անցել 2-րդ տարում	3	6	-	2	
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում	3	6	-	5	4

Ֆրանսերեն լեզու և գրականություն	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը շրջանավարտ			**-**	**9**	**10**
Աշխատում են, որից՝			**-**	**2**	**4**
Մասնագիտությամբ			-	*2*	*2*
Ոչ մասնագիտությամբ			-		*2*
Աշխատանքի են անցել 1-ին տարում			-	2	4
Աշխատանքի են անցել 2-րդ տարում			-		
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում			-	2	2

4. Կիրառական արվեստի ֆակուլտետ

Կիրառական արվեստ	2013	**2014**	**2015**	**2016**	**2017**
Ընդամենը շրջանավարտ		**33**	**-**	**31**	**15**
Աշխատում են, որից՝		**10**	**-**	**15**	**4**
Մասնագիտությամբ		*3*	-	*4*	
Ոչ մասնագիտությամբ		*7*	-	*11*	*4*
Աշխատանքի են անցել 1-ին տարում		4	-	13	4
Աշխատանքի են անցել 2-րդ տարում		2	-	2	
Սովորում են/սովորել են մագիստրատուրայում			-		1